

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
2016թ. մայիսի 30-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր  
Ա.Լոքյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական  
խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր  
Խ.Բեգիրջյան:

2. Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Վազգուշ Գևորգի  
Կոստանյանի գիտական ղեկավարի փոփոխման մասին հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր  
Խ.Բեգիրջյան:

3. Ընթացիկ հարց: Հանրային կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսական  
գիտությունների թեկնածու Արսեն Եղիկյանին Ը.00.02 «Տնտեսության, նրա  
ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ դոցենտի  
գիտական կոչում շնորհելու մասին հարցի քննարկումը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար  
Հ.Ստեփանյան:

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2015-  
2016 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և  
մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ  
հաշվետվությունը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր  
Խ.Բեգիրջյան:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Լ. Զիլֆուլարյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2015-2016 ուսումնական տարվա որակավորման պետական քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**2. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Իրավագիտության ամբիոնի հայցորդ Վազգուշ Գևորգի Կոստանյանի գիտական ղեկավարի փոփոխման մասին հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Խ.Բեգիրջյանը ներկայացրեց, որ Իրավագիտության ամբիոնում քննարկվել է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Վազգուշ Գևորգի Կոստանյանի «Հայաստանի Հանրապետությունում հարկաբյուջետային համակարգի սահմանադրաիրավական հիմունքները» թեմայով թեկնածուականատենախոսության գիտական ղեկավարի փոփոխության հարցը: Իրավագիտության ամբիոնը 27.02.2016թ. կայացած նիստի որոշմամբ առաջարկում է Վ.Կոստանյանի թեկնածուականատենախոսության գիտական ղեկավար նշանակել Ռաֆիկ Պետրոսյանին՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով Վազգուշ Կոստանյանի գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանը հրաժարվել է ղեկավարել թեկնածուականատենախոսությունը և միևնույն ժամանակ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Պետրոսյանը տվել է իր համաձայնությունը՝ լինելու Վ.Կոստանյանի թեկնածուականատենախոսության գիտական ղեկավարը:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

**Որոշեցին՝** Վազգուշ Գևորգի Կոստանյանի՝ «Հայաստանի Հանրապետությունում հարկաբյուջետային համակարգի սահմանադրաիրավական հիմունքները» թեմայով թեկնածուականատենախոսության գիտական ղեկավար նշանակել Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

**3. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հանրային կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու Արսեն Ժորայի Եղիկյանին Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին հարցը:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյան:

Հ.Ստեփանյանը նշեց, որ հանրային կառավարման ամբիոնի դասախոս, Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսական գիտությունների թեկնածու Արսեն Եղիկյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ>>-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին:

Ա. Եղիկյանը 2007թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: Թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո հրատարակել է 5 գիտական հոդված (3-ը համահեղինակությամբ) և 1 ուսումնամեթոդական ուղեցույց: Ա. Եղիկյանը 2007 թվականից ՀՀ պետական կառավարման ակադեմիայում դասավանդում է <<Բանկային գործի կառավարում>> առարկան:

**Արտահայտվեցին՝** Հանրային կառավարման ամբիոնի վարիչ Գ.Գսպոյանը: Նա նշեց, որ Արսեն Եղիկյանը որպես դասախոս ակտիվորեն մասնակցում է ոչ միայն ամբիոնում, այլև ակադեմիայում իրականացվող գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներին:

Այնուհետև ակադեմիայի գիտական խորհրդի նիստի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ Ա.Եղիկյանն իր աշխատանքն իրականացնում է բարեխղճորեն և արժանի է հայցվող գիտական կոչմանը, ուստի առաջարկեց իրականացնել գաղտնի քվեարկություն՝ հաշվիչ հանձնաժողովի հետևյալ կազմով՝

1. Գրիշա Գսպոյան՝ նախագահ
2. Արմենակ Այվազյան՝ անդամ
3. Հասմիկ Ստեփանյան՝ անդամ

Բաց քվեարկությամբ հաստատվեց նշված կազմը:

Գաղտնի քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Գ.Գսպոյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները (կից ներկայացվում է): Քվեարկության արդյունքներն են՝ գիտական խորհրդի 27 անդամներից նիստին մասնակցել են 18-ը, որից կողմ՝ 18, դեմ՝ 0, անվավեր՝ 0:

Այնուհետև բաց քվեարկությամբ հաստատվեց գաղտնի քվեարկության արդյունքները: Քվեարկությունն անցավ միաձայն:

### **Որոշեցին՝**

1. Հաշվի առնելով, որ հանրային կառավարման ամբիոնի դասախոս, տնտեսական գիտությունների թեկնածու Արսեն Եղիկյանի կատարած գիտամանկավարժական և ուսումնամեթոդական աշխատանքները համապատասխանում են ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգ>>-ի 5-րդ մասի Բ ենթակետի պահանջներին՝ Արսեն Ժորայի Եղիկյանին շնորհել դոցենտի

գիտական կոչում՝ Ը.00.02 <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ:

2. Միջնորդել ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովին՝ հաստատելու սույն որոշումը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան  
30 մայիսի 2016թ.

Կ.Տ.